Պ-ասպետյանների
սրբոցն Հոգեւորի.

1809 թվին

891.99
S-35

909

13 APR 2011
89.99
S-35
Ա 352

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԱՐՑՈՒՆՔԻ ՀՈՎԻՏԷՆ

ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ

1001
4018

Գրեց
Հ. Ս. Ս. ՏԻՎԿԱՆՑ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.P.A Публичная Б...
7/XI 22
Ереван, Мясник...
ՄՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ*

ԹԻՖԼԻՍ
Տպարան ընկ. «Ծրագիր» Типогр. т-ва «Программа»
1909

58156

ՁՕՆ

Պաշտելի մօրս տ. Մաքրուհի Տէր-Սարգսեանցին

Պաշտելի մայրիկս!

Մայրենի, հարազատ, գորովդ ու փայփայանքդ տարի ու կէս միայն վայելած եմ...: Բաղդին անողոք փոթորիկովն մայրենի բունէն ճռրկուած, անճիւղ ոստ անոստ տերև մը եմ... մայրական ս. սիրոյ արևէն զրկուած, դալկահար ծաղիկ մը եմ, որ տարաժամ կը թառամի հարազատ հիւթին կարօտ...: Անթև թռչնակ մ'եմ որ թռչելու անզօր ճիգերով, մայր ու մայր կը փնտռեմ յարաժամ...: Ինչո՞ւ մայրիկ, այնքան վաղաժամ թողիր էս ցաւերու, արցունքի հովիտը, նախզգալով արդեօք այն սև սև զուլումներ, որոնք ողբացին անթիւ մայրեր...: Աւաղ, ապերախտ յիշողութիւնս անզօր է երևակայութեան ֆօնի վրայ պատկերացնելու նուիրական պատկերդ գոնէ մխիթարութեան համար...: Աւաղ, ոչ մայրական սիրազեղ համբոյրիդ ճաշակը վայելած եմ և ոչ քաղցրահնչիւն օրօրներուդ մեղանուշ թրթռումները...: Մայր իմ, նուիրականութիւնդ առաւել կը շեշտուի ինձ համար, երբ ծանօթներ հոգեմայլմունքով կը պատմեն, հրեշտակային պատկերիդ տակ ծրարուած, այն վեհ, առաքինի, աղքատասէր և անբիծ հոգւոյդ մասին, որմէ զրկուելով աւաղ, որբացայ...:

Հրիփսիմեան Դպրոց
Եկեղ.-ծխակ. (օրիորդաց)

13 SEP 2013

Տարտամ ու անթափանց ժշուշներու ետեւէն՝ լուսեղէն ոգիդ դիւթական կը մնայ ինձ համար նուիրական, ցանկալի և երկրպագելի, կոնդնած այն բարձրութեան վրայ ուր մայր մը միայն կարող է բարձրանալ։ Ուրեմն մայր իմ, ընդունէ կարօտով ողջակիզուած որդիդ քու ս. յիշատակին ձօնուած, «Արցունքոտ հովտի» երգերը, ես էլ կը փութամ կ'արտորեմ, վեր աստղերէն էլ վեր թեւածելով փարելու ցանկալի հոգւոյդ, հոն ուր Աստուած կը բնակի...։

Սիրելի ընթերցող, եթէ բաղդ քեզ շնորհած է մայր հարազատ, պաշտիր զայն հոգւոյդ և կարողութեանդ ամբողջ թափով, մի վշտացներ անոր զգայուն և գոհար սիրտը, որու կեանքոտ մէկ սիրավառ նայուածքին, մէկ ջերմ համբոյրին չեն կարող հաւասարել ամբողջ աշխարհի գանձերն և ոսկին։ Սիրեցէք, սիրելով սիրեցէք, ձեզի կեանք տուող մայրեր, և մայրերու էլ կեանք տուող մայր հայրենիքը։

Որդիդ Հ. Տ- Ս. Տէվկանց

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Դարաւոր նինջէ վերջ, դժբաղդ հայի զարթումէն մինչև սահմանադրութեան կրկին երևումն, այդ հոնտամեայ, տառապանաց, արեան արցունքի, և արտաւիրքներու, տխուր, մռայլ և սև օրերու պատմութիւնը ով չգիտեր...։

Երգերս տանջւող ոսկրացած ժողովրդի հառաչանաց, բողոքող կոչերու և ոգորումի արձագանք և արտօսրի դառն կաթիլներ են, արեան և «արցունքի հովիտին» ամենակուլ անդունդը գլորուող...։ Շատերը թերևս առարկեն թէ այժմ երբ սահմանադրութեան ոսկեշող արեգը կը խոստանայ կենդանութիւն պարգևելու մեր և մեր նմաններուն, սառած փայտ կըտրած անգամներուն, ինչ հարկ բանալ երբեմնի արիւնոտ վէրքերու շարաւոտ բերանը։ Երբ սիրոյ և եղբայրակցութեան, հովը կը շնչէ ամենուրեք, ինչ օգուտ հին ցաւերը քրքրել, մեծ մասամբ ազգայնակա՛ ոգի կրող երգերով։ Ահա մեր պատասխանը այդ միակողմանի դիտողութեան։

Որքան էլ անկեղծութեամբ և վառ սիրոյ ոգևորութեամբ կարկառուած լինի, թիւրք եղբայրներու կողմէն մեզի պարգևուած միութեան և հաւասարութեան ձեռքը, այդ չի նշանակեր թէ մօտիկ, խիստ մօտիկ անցեալին մէջ, հայեր չեն կերած սոսկալի ջարդեր, անլուր չարչարանքներ, թէ անոնք դարաւոր մարտիրոս չեն ե-

զած հին ռէժիմի հրէշային անգթութիւններուն... ո-
րոնք անխուսափելիօրէն պատմութեան կարգ կ'անց-
նին այժմ։ Եւ այդ տխուր օրերու յիշատակն ու վեր-
յուշումն չեն կարող արգելք լինել որ հայն ոչ միայն
իր կարողութեան և կորովի ամբողջ թափով չփարի
եղբայրութեան, հաւասարութեան և ազատութեան ս.
դրօշակը բռնող ձեռներուն, այլ նոյն իսկ իր կուրծքն
ու կեանքը սիրով ջնուիրէ անոր ի սէր վաղման կար-
տաշիին (հողի եղբօր) շահերուն ու պատուոյն...։

Եւ թէ ով որ չսիրեր իր ծնողն եղբայրն ու ըն-
կեր նա չի կարող սիրել իր ազգը, և ով որ սիրեր
իր ազգը, նա չի կարող չսիրել իր դրացի ազգեր, ո-
րոնք մարդկութեան հսկայ շղթային օղակները կը
կազմեն։

Հ. Տ. Ս. ՏԷՎԿԱՆՑ

ԴԱՒԱՃԱՆ ԴԱՒՕԻ ՍՊԱՆՄԱՆ ԱՌԹԻ

Կոտորուողներու յիշատակին (908 մարտ 10)

Քաղցրիկ վաթանիս[1] դիւք[2] պանցրիկ[3] սարեր,
Ձեր կատարն ի[4] պանցր[5] թէ սրտիս դարդեր։
Զուլալ[6] կամարի պսպղուն[7] աստղեր,
Ձեր թիւն անհամարս[8] թէ սրտիս ցաւեր։
Քաղցրիկ վաթանիս դիւք պանցրիկ սարեր,
Ինչի՞ ձեր կող կուշտ կարմիր ի ներկւեր։
Եղնիկ[9] հայ կոյսեր սև մոխրի վէրէն՝[10]
Մարդրիտ թափ կ'ատն իրանց աչերէն,
Հէր[11] փնտռեն սրմա[12] ու սև սաթ ծամեր,
Վարդ կարմիր թշից յորդեն գետակներ։
Քաղցրիկ վաթանիս դաշտեր ու ձորեր,
Ա՜հ, ինչի՞ դիւք էլ, կարմիր էք հագեր։
Մէկն խելք թալած[13] փնտռի սիրական,
Ինոր[14] պարկ[15] սիրով մրկի անկիւման[16],
Մէկն կանաչ կտրիճ իր ազիզ ախպօրն
Մայրն՝ իր կեանք արև զաւակն, աղջիկն հօր։

---

1) Հայրենիք. 2 դուք. 3 բարձր. 4 է. 5 բարձր. 6 յստակ. 7 փայլփլուն. 8 չը համարուող անթիւ. 9 երիտասարդ աղջկայ ժողովրդական բացատրութիւն. 10 վրան. 11 ինչու. 12 ոսկեգոյն. 13 նեռած. 14 անոր. 15 հրատապ. 16 անճար.

Քաղցրիկ վաթանիս անմահ առուներ,
Ա՜հ, ինչի՞. աջապ[1], կարմիր էք ներկւեր։
Քանց ժեռ սարն անսիրտ անխոկի[2] դիւշման[3]
Ձեզի փարատեց կեղանի[4] նման,
Մինչ դիւք տատիմիզ[5] կը տառնիք դատրած
Անմեղ ու անզէն յոգնած, ջարդուած։
Ո՞վ անմեղներու ապաւէն Աստուած,
Ձտեսար հայերն արնով շաղախուած...։
Հա՛, կուկեա[6] կեարուն[7] նախշուն թեւերով՝
Պլպուլն[8] կը ծէնի[9] վարդին կարօտով,
Սար դաշտ կը ժմտա[10] աչօք պսպղուն
Ուրախ ու զուարթ թռվռա[11] անտառուն,
Ա՜խ... հէ՞ր չի ժմտա խեղճ հայի աչեր
Պղտոր ու պղտոր հոսի հեղեղներ...։
Կեարունը կուկեա[12] թռչունք թեւաւոր՝
Անդարդ կը թափեն լեզուք բիւրաւոր,
Ինչի՞ խեղճ հայը բախտով սեւաւոր
Մոռանայ խօսիլ լեզուով բանաւոր։
Տարին մէկ անգամ եւ դառնայ կեարուն,
Է՞ր հայի գեարիւն փախչի միշտ հեռուն...

Ի ԴԷԱԼՍ

Թէ տանջուող իմ եղբայրքս, անշարժ լճի մը նման
Տգիտութեան խաւարի բռնութեան տակ դեռ խորդան,
Թէ հիւսիսի[13] սառ շունչով սառած անյո՛յս, անկենդան
Շարժուելու զգալու, դեռ ևս բնաւ յոյս չը տան,

[1]) Արդեօք. [2] անհոգի. [3] թշնամի. [4] գազան. [5] աշխատանք. [6] կուգայ. [7] գարուն. [8] սոխակ. [9] ձայնի. [10] ժպտի. [11] ցատկրտել. կուգայ [13] Օսմանեան բռնապետութիւն.

Պիտ սլանամ ամպոց մէջ, հոն գտնելու շանթից բոյն
Գողնալու շանթ հրեղէն, Պրոմէթէոսի մ՝ հանգոյն,
Սառած ոգւոց անմարեր տալու աշխոյժ, հուր կրակ,
Հոգ չէ թէ անգղ բռնութիւն կրծէ սիրտս շարունակ։
Ինձ կաշկանդող երկաթեայ շղթայից խուլ շառաչմունք
Անշուշտ պիտ տան արձագանք, և իմ եղբայրքս քաջա-
զունք.
Գիտակցութեամբ զօրացած, գոռան, ցնցուին, որոտան.
Հոգ չէ յայնժամ թէ սրտէս, արեան գետեր ի վայր գան։

ԻՄ ՀՐԱՑԱՆ

Ո՞վ պլպուլիկ,
Թռչնակ սիրուն,
Երգդ է քաղցրիկ,
Յոյզով լեղուն,
Բայց երբ գոռայ
Իմ հրացան,
Սիրտս մոռնայ
Երգդ քաղցրաձայն,
Լոկ երգ մը չէ.
Երկայն փողէ
Դուրս պոռթկացող
Ձայնը ցնցող,
Այլ դառն հառաչ
Իրար բարդուած,
Դժբաղդ հայի
Որ տառապի,
Երկար դարեր
Նստած այրի

Աչքն արցունքոտ
Սիրտը խոցոտ։
Ո՛վ հրացան,
Մարդիկ համայն
Իրաւունքը
Քեզի տուին,
Մոռցան երգը
Մեր սոխակին։

ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ՈՒԽՏԸ

Նստել եմ խաղաղ լճակի ափին՝
Ջեռքը երեսիս, խոր խոր մտածում.
Նայում եմ երկնի կապոյտ կամարին
Եւ մրկած սրտէս մի ահ... դուրս թռչում։
Սառ որպէս արձան նստել եմ տխուր,
Անշարժ, քարացած, մտազբաղ ու լուռ,
Աստղեր շողշողում, լուսինն անուշիկ՝
Հոլովում իրա անիւը մեղմիկ։
Եւ ահա զարթեց երազող հոգիս,
Անդուսպ մրրկով մ՝ փոթորկեց սրտիկս,
Այրած ճակատս վար առի խոնջած
Ասի, հայրենիք քեզ եմ կարօտած։
Հայրենիք անբաղդ Եդեմ մոռացուած,
Հող, ջուրիդ զուրպան, միշտ արնով ցօղուած.
Մինչ երբ, սգաւոր, ցաւօք անպատում
Հառչես աղեխարշ, տխուր ու տրտում։
Սիրաս քար ես կարծում մինչ սուրբ ափերովդ՝
Հեռուն տարագիր, մաշւում կարօտովդ,
Սուրբ աւերակացդ անա դայ պանդուխտ,
Նուիրել արիւն ընդունելի ուխտ։

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԷՐ

Անմիաբան ոգին քանդեց Հայ ազգի հիմն վեր ու վայր,
Թագի փոխան՝ շղթան կռեց սարկութիւն մահաբար,
Բանտ հայածանք արիւն աքսոր և բռնութիւն ժանգոտած
Երկնեց ծնաւ յեղափոխող մարդն առաջին մահատեաց։
Հազարաւոր սրտից հոսող արեան գետակն կարմրորակ՝
Ցնցեց աշխարհ ցոյց տալով որ՝ հայի վիճակն չէր կատակ։
Թող տանք ուրեմն կուսակցական թթու ոգին չարաթոյն,
Եղբայրասպանն չունի գութ սէր միայն խենդ տայ թըշ-
նամոյն։
Տանք ձեռք ձեռքի սիրան ալ սրտի մենք գործ ունիմք
անապին,
Միասնաբար կռուենք անվախ, ի սէր դժբաղդ հայ ազգին։
Անխարդախ սէր, և անկեղծ գործ այն, կ՝օրհնէ միշտ
Աստուած
Արցունքոտ աչքն պիտի տեսնէ յայնժամ հայ ազգն
փրկբուած։

ՍԵՒ ԱՐԻՒՆԻ ՏԱՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

Ասիտիսեանի յիշատակին

Նուիրական այն երկրի՝ որոյ մէջն մի գաշտ, թուփ, սար,
Նահատակաց արիւնով կը ոռոգուի զարէ զար,
Ուր բռնութեան անտ մրրիկ իր մահաբեր սև շունչով՝
Աւերակաց կոյտ դարձուց Հայաստանն իր շէնքով։
Երբեմնի ջինջ երկինքը, թուխ-թուխ ամպերով պատած՝
Յուսոյ աստղն չէր երևնար, աւաղ, անյայտ էր կորած,
Յանկարծ փայլակ մ՝ շեշտակի կուրցնող փայլով անաւուր
Կը մխրճուէր գարշահոտ կողն այն զազիր վիշապին,

Որը շուրջ հինգ դար բոլոր, լափեց արիւն հայ ազգին։
Յեղափոխութեան առաջին հարուածն էր այդ փառաւոր։

*

Գաղափարի կարապետ Փորթուգալեանի շունչով՝
Վրէժի հրդեհ կ'բռնկէր հայի սրտին մէջ խռով։
Տակաւ մարմին կ'զգենուր արդար բողոքը հային,
Արմենական խաչակիր ծածանող սուրը դրօշակին՝
Տակ հաւաքուել կուգային, հայոց քաջերն գունդագունդ,
Ազատութեան կարօտով, խոցել ոսոխը անգութ։
Իսկ Աւետիսեանն անմահ յեղափոխութեան ոգին,
Սուրով հուրով կ'մկրտուէր Վան տոչորող մեծ դէպքին։
Ուր ութ օր գոռ քաջերով՝ կուրծք կուտար դիւցազնարար
Թնդանօթի գնդակին, մեծ մարտին մէջ անհաւասար։
Ապա խաչն իր շալակին, հուրէ պսակն վեհ ճակատ,
Ազատութեան զոհ կ'իյնար, քաջերուն Ազրակու դաշտ։
Հոն Թաթէին քովիկը նոր Վարդանը կը բանար,
Կարմիր վարդն իր հարզող ազատութեան ճանապարհ։
Արմենական առաջին փառքն ցոլար այս կերպով,
Կանգնելով սուրբ մահարձան անմահութեան թափնիով։

*

Իսկ այժմ դարձած բոլորուած սև արիւնի տատնամեակ
Վերակազմուած ծածանի՝ Արմենական սուրբ դրօշակ,
Անցեալն դառն խարկանքէն փորձառութեամբ առլցուն՝
Ո՛չ, գոհավէժ յարատև, կառաջնայ անկեղուն։
Մեր ուխտ հաստատ է ընկերք, չենք դադրերու կռուելէ
Մինչ ականջնուս չ'հնչէ «թէ Հայաստան ազատ է»։
Յաւէրժանայ թող յաւէտ յեղափոխութեան ճամբին
Ընկած անմահ քաջերու, քաղցր յիշատակը անգին։
Յաւէտ կեցցեն, ու ապրեն գործիչներ մեր սուրբ դատին
Որոնք սրբել կը ճգնին, հէքին արցունք դառնագի։

ՍԵՒ ԱՐԻՒՆԻ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

Պետօի եւ Մարտիկի յիշատակին.

Գազի տաղ սար ապերախտ ծիլդ ու ծաղիկդ չորանա,
Հայ քաջերը առիւծի, ուր վար ինկան, ինձ տան,
Հրդեհ սրտովս դառնացած. վտականոս աչերով՝
Քայլամոլոր կը շրջիմ, խռոված տրտում հոգւով։
Գէտ, Մարտիկ, կը ձայնեմ հեկեկանօք տխրագին
Դուք պաշտելի հերոսներ, փառք ու պարծանք հայ ազգին՝
Ո՜հ, պատասխան տուէք ինձ, ուր ձեր շիրիմ սրբազան,
Ձեր ոսկերաց խնկելի համբոյրներ տալ կը ցանկամ։
Անարեկիչ լռութիւն, ձայն շղուկ մ' իսկ չի լսուիր,
Գերեզմանները են անայտ... ու փափաքս չի լցուիր։
Ու յուշս ետ կը դառնար, դէպի Վանի մեծ դէպքն ահեղ
Ուր բիւր գնդակք սուլէին ոռնար թնդանօթն զօրեղ։
Ուր բռնաւորն փրփրած՝ ֆշար օձի մը հանգոյն,
Ի տես գերի հայ ազգի կարճութեան անկուն։
Սուր հուր, գնդակ ու հրդեհ, դժոխային մի կրկէս,
Բացուած էր հոն, և հայեր եռանդ կարած թոցակէզ
Գիտակցութեամբ զօտեպինդ մարտնչէին երգելով,
Եւ խաւարին թունալի նետեր չ'աղդէր վախ, խռով։
Իրր Հերքիւլէսք հայկական Պետոն Մարտիկ պաշտելի,
Աշխոյժ եռանդ ոտքէին, և թշնամին վատոգի՝
Թնդանօթը բաց թողած՝ յետ կը փախչէր սարսափած,
Կենսամարտին հերոսներ վաղուց էին խիզախած։
Վանի կռիւն փառաւոր, հայի նկուն ճակատը
Վեր բարձրացրեց, և ես սիրով խանդակաթ,
Կ'օրհնէի այն սուրբ երկիր, որ կեանք տուաւ ձեզ նման
Մեծհոյակապ գործիչների արդարութեան գոռ պաշտպան։
Գազի տաղ սար ապերախտ, դուն հայ քաջեր կուլ տուիր,

Անգութ, անսիրտ անողորմ, աղդեօք, բնաւ խիղճ չարիր։
Կրծքիդ ժայռին եռաւ ութսուն քաջաց արիներ,
Մաբ կը մտնէր միանգամ, կարմիր ներկած ձորն ու լեռ։
Ինոր լուութեան մէջն ահեղ. հեկեկանացս բուն միայն,
Կ'արձագանդէր սիրտդին, ես մենաւոր լուռ անձայն
Համբոյր տայի հողերուն, խառնելով երկնի ցօղին
Արցունքիս դառն կաթիլներ· նահատակաց արիւնին։
Եւ մինչ այդ լիրանց վրայ սև շղարշը ամպերուն
Սուգի նշան կը կախէր, ձայն մը զօրեղ և թրթռուն,
Ցնցեց էութիւնս համակ, «այ դու հայորդի անմիտ,
Զոմ կը փնտռես լալագին. այն հոգիները վճիտ,
Իրանց պարաք կատարեցին. և կեանք թողին քաջի պէս
Ցանկալի քեզ այդ ուղին, ճն եկ ուղիդ ետևէս։
Մենք մեր արեամբ կարմրիկ. ոոոգեցինք Հայաստան
Որ շուտ ծլի ու ծաղկի սերմերը սուրբ փրկութեան։
Օ՜ն, ետ դարձիր ու գնա, տուր փրկութեան աւետիս
Իմ զրկուած եղբարցս, արիւնաքամ հայ ազգիս...»։

ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆ ԱՐՑՈՒՆՔ ՈՒ ԲՈՂՈՔԸ

Եարալու[1] սրտիկս կռա կռկռայ[2]
Ցոթնա[3] ինկած ծովու մը նման,
ԱՀ... դա[4] սարերով դարգեր դիզուած կայ
Էլ ազատուելու չկայ ճար կիւման[5]։
Պէմուրատ[6] աշխարհ հիչ[7] մե[8] չի ժմտաց
Որ տեխ[9] որ դառցանք տառնիկ կոծ ու լաց,
Սար քարն ի պռնե[10] մեր լաց աղաղակ,
Տիւշմանի տնիկն էլնէր պրբրշակ[11]։

1) Վիրաւոր. 2 գոռգոռայ. 3 ալէկոծութիւն. 4 հոն. 5 հնարաւորութիւն. 6 փափաքի չհասցնող. 7 բնաւ. 8 մեզ. 9 կողմ. 10 բռներ. 11 աւերակ։

Խաւքն[1] ուր[2] ճետերով պոնի[3] մէջ թառած՝
Խանկիստ[4] քուն քաշի[5] մեր թառն[6] են քանդած
Լիւանակ[7] իմ լիւանակ, այ մաղլում[8] լիւանակ,
Արնով պրինտար[9] մեր հալ[10] կը տեսնեՔ.
Մարե մեր օճախ-ընցե[11] մեր ճրագ,
Արե, լանք մէկտեղ, թէ արցունք ունես։
Թող որ սիւրբկէր[12] իմ ջուխտակ[13] աչեր,
Ջտեսնէր քաղցրիկ վաթանն իմ աւեր.
ԱՀ... Աստծու տուն, վանք եկեղեցին
Անասուններաց ախոռ դառցուցին։
Փչէ սառ քամին, ճօղակտոր արե
Մեր ազիզ ախպէրքն աշխարհն ի ցրուե.
Ինոնց խեղճ ճիժ պիժ[14] տկլոզ[15] անսբաղ[16]
Փողանոներ[17] քաշ կեան մեռած են, թէ սաղ։
Կարիպն ու կուրպաթ[18] սիրով քիւլֆաթին.
Մրկեն քիւլ դառնան կարօտ վաթանին,
Էն վիվ[19] ի տիսե որ եղն կալատեղ,
Քրտինքով շաղղուկ[20] մորթեն տենստեղ[21]։
Տառնիկ կը տատենք[22] տառտակ[23] կը նստենք
Օսմանլուն քիւրդին ծոց ճէօղ[24] կը լցենք։
Տիւշմանն անգութի չհաշւե լէն[25] նեղ
Կուզես ափանդ մէջ արա ձուազեղ.
Տիւն[26] հա[27] կեավուռ[28] ես անսիրտ անհոգի,
Ու ջանդակդ[29] փռող ջաննաթի[30] որդի։
Քանց վարդն ու շուշան անուշ մեր կոյսեր

1) Թռչուն. 2 իւր. 3 բոյն. 4 հանգիստ. 5 քնանայ. 6 թռչունի քնացած տեղ. 7 լուսնակ. 8 հեղիկ. 9 շաղախուած, 10 վիճակ. 11 մարե. 12 սպիտակէր. 13 զոյգ. 14 տղաներ. 15 մերկ. 16 անօթի. 17 փողոցներ. 18 նժդեհ. 19 ով է։ 20 շաղաղուած 21 տեղնիտեղ։ 22 աշխատեր։ 23 դատարկ։ 24 գրպան։ 25 լայն։ 26 դուն։ 27 միշտ։ 28 Ինասուուած, անհոգի։ 29 դիակդ։ 30 գրախտ։

Նամուսի[1] հրեշտակ մեր մէջն[2] ու քոյրեր,
Շուն լիրբ դիւշմանի կրքերուն գերի...:
Մեռնինք օր առաջ էսա[3] ի՞նչ հալ[4] ի
Զմէն[5] քար քէն[6] վէր[7] քարավանից,
Ի՞նչ կուգեն խոնք[8] մեր անճար ջանից[9]:
Էսօր վէրկի[10] վաղ սարակի փարայ[11]
Ուշուր[12] ու կամչուռ[13] օլամ[14] գիւղարայ[15],
Տուր հա տուր կուգեն, հիչ[16] մտածող կա՞յ,
Թող չէնի, տիւն տուր, թող խոկէղ[17] դիւս կեայ[18],
Ա՞խ մենք գէրի[19] ենք, եէսիր[20] սեազիր,
Աստուած դիւն մեզի հիչ[20] չը գթացիր:

*

Զէ՞, մենք թոռներն ենք Հայկի Վարդանի,
Յուսահատութիւն մեզ ի՞նչ կը վէլի[21]:
Աստուած դարդ տուէ, դարդին էլ դարման,
Մէնակ թէ ճանչնանք, մեր տօսթն[22] ու դիւշման:
Ինչքան շատ կզուանք[23], էնքան շատ խէծան[24]
Որքան խեղճ մնանք, մեր գլխին կուտան:
Թէ որ գեղ[25] կայնի[26] կը կոտրի կէրան
Մինակ թէ մէկ սիրտ էլնենք[28] մէկ պէրան[29],
Առնենք թուր, թվանք[30] պարիւթ[31] ու գնդակ,
Մեր կարճութիւն դիւշմընին ցոյց տանք:
Թէ որ միանանք խոկով[32] ու սրտով
Փակուած դռները պիտ պացուին[33] շուտով:

1) պատիւ: 2 մայրն: 3 այս: 4 վիճակ: 5 ամէն: 6 մանր քարեր: 7 վրայ: 8 ասոնք: 9 անձից: 10 գլխահարկ: 11 ճամբայի տուրք: 12 ասասնորդ: 13 ոչխարի տուրք: 14 ձրի ծառայութիւն: 15 ձրի ծառայութեան նուիրագործուած տեսակ: 16 բնաւ: 17 հոգիդ: 18 գայ: 19 գերի: 20 բնաւ: 21 վայելէ: 22 բարեկամ: 23 խոնարհուեցանք: 24 հեծան: 25 գիւղ: 26 կանգնի: 27 գերան: 28 լինենք: 29 բերան: 30 հրացան: 31 վառօթ: 32 հոգւով: 33 բացուին:

Թէ որ նեղ մնայ, ճանկ թալի[1] կատուն
Կատուից էլ քէօթի[2] տառցանք պիս պիւթիւն[3],
Աշխարհ թաքառի[4] մը պէս կը դառնայ,
Մէկ օր էլ ծառան ազատ կը դառնայ.
Զէ՞ որ յաջորդի սև մութ կիշերուան,
Լեռս[5] պուչամներով[6] քաղցրիկ ազօթրան[7]:
Կանչենք անխախտ[8] խաչ, չէօր[9] զարնենք կէտին[10]
Որ յաջողութիւն տայ մեր սուրը գործին.
Զարնենք, զարնուենք, մեռնենք, եա[11] ապրենք
Մեր աշխատանքով աշխար շէնցուցենք:

ՆԺԴԵՀԻՆ ԱՐՑՈՒՆԲԸ

Ամպոտ երկինքը մռայլ է տրտում,
Հառաչ հանելով անվերջ արտասուում.
Էլ չի երևում արեգը պայծառ
Ճնշըւում էրուած սրտիկս հրավառ:
Հոգիս արձագանդ կտայ երկնքին
Հեղեղք արտասուաց աչացս վար հոսին.
Մենակ եմ մենակ դառն վշտերուս հետ.
Օտարութեան մէջ կորսուած անհետ...:
Ո՞ւր քաղցր հայրենիքս իմ այն կենսատու
Չկան սիրելիքս, ահ շատ են հեռու..
Օտար են բոլոր, խորթ, անկարեկից,
Զրկուել եմ սիրոյ քաղցր մթնոլորտից:
Ո՜հ. էլ չեմ լսում, ճուտերուս քնքոյշ
Այն հրեշտակային ճուռղն մելանոյշ,
Ու իմ մտերմաց ճակատներն անկեղծ
Չեն գալ բաժանել վշտերս անվերջ...,

1) Նեռէ: 2 ստոր: 3 բոլորովին: 4 անիւ: 5 լոյս: 6 բաշերով: 7 ազօթարան: 8 չշարժբուող կամ անյաղթելի: 9 ծունկ 10 դեռին: 11 կամ:

1001/4018

Ինչ՞ւ հայրենեացս քաղցրաշունչ հովիկ
Հբատապ ճակատս զովացնել չի գալ,
Թռչունք դրախտին այն ալախօսիկ
Երգերով աղու խոցոտ սիրտս բանալ...:
Զկա՞ն հարազատք, մա՞յր, քո՞յր ամուսի՞ն,
Ո՞վ զթայ արդեօք. դժբաղդ դարիպլին՝
Երբ նա իր հիւանդ գլուխն գալկահար
Գետինն է գցում, առնելու դադար:
Ո՞հ. դառն է վիճակդ, դարիպ սեաւոր,
Տաքուկ բոյնդ թողած քանդուած աւեր
Շրջիս մոլորուած, միշտ աստանդական,
Մինչ ձագերդ բերան բացած՝ քեզ ՝ՀՀան:
Դուն ազօթում ես խորովուած հոգւով
Ա՜խ, ե՞րբ պիտ դառնամ հայրենիքս փութով,
Եւ սիրելիներս պինդ սղմած կրծքիս.
Առնեմ կարօտս, չ՚փչած հոգիս...:

ԱՐԵԱՆ ՊՏՈՒՂ.

Դժբաղդ հայ ազգը վեց դարեր ամբողջ՝
Անգութ բռնութեան տակ հիւծէր դողդոջ:
Լեղի էր կերած, խմած դառն քացախ
Գիշերներ կուլար, ցորեկ քաշէր վախ...:
Ազնուականի մը պէս բազդազուրկ
Բոկոտն կը շրջէր, դառնացած, մնշուք,
Աչերը խոնաւ, վիզը ծուռ ընկած,
Սիրտը արիւնոտ թև թիկունք կոտրած:
Իր բոյնը աւեր ճիտերն ցիր և ցան
Ա՜հ, նա դարձել էր ոգի՞ ուրուական:
Ո՞վ կասէր թէ նա տարիներ առաջ,
Ոսկի թագ գլուխն, նստէր փառապանծ.

Իր զինուորներով թունդ հանէր աշխարհ
Ոտքերուն առաջ դողար ձորն ու սար...
Ու իր ժողովուրդ անհոգ երջանիկ
Վայելէր ազատ հայ երկրի բարիք:
Իսկ անմիաբան դաւաճան ոգին
Խլեց իր թագը և հայի որդին՝
Խրուեցաւ անդունդ սև տգիտութեան,
Ա՜հ դարձաւ գերի, ու խաղք բռնութեան.
Հինգ երկար դարեր, նա զերդ մի դիակ
Խորդար անկենդան, ժանտ բռնութեան տակ.
Բայց գիտակցութեան լուսեղէն ոգին՝
Եկաւ հուր տալու, թմրած հայ սրտին:
Հայ բացաւ աչերն, տեսաւ իր վէրքեր
Վէրքեր շարաւոտ ուրկէ մահ հոտէր,
Բողոքեց, գոռաց ցնցեց պիրկ շղթան.
Լեռն, ձորն ու անտառ կարմիր զգեցան:
Հայ կը ջարդուէր յանուն ուղղութեան՝
Հայ հոգի կուտար սիրով փրկութեան:
Անգութ Եւրոպան, սառն ու անտարբեր
Լոկ դիտէր, երբեմն համբէր դիակներ:
Յեղափոխուած հայն մօտ եռսուն տարի,
Սև տանջանքներու, մահ կախաղանի
Մէջէն խոյանար միշտ դէպի յառաջ,
Սուրբ ազատութեան աչքերը յառած:
Եւ արդարութեան աղբիւրը Աստուած
Մարտիրոս հայի արիւնն հոտոտաց,
«Բաւ է լրանայ թող տանջանաց թիւ»
«Թող շիտակ դառնայ հայ բաղդի անիւ»
«Ինքն աշխատասէր, երկիրն բարեբեր»
«Թող քրտինք թափէ, միշտ բարձրանայ վեր,

«Թէ նա միշտ ապրի ոգով միաբան»,
«Սիրէ իր ընկերն սիրով մը անխառն»
«Թէ պաշտէ իր տէրն, ամենուն Աստուած
«Ազատ պիտ շնչէ նա միշտ անկասկած»։
«Գթացի այո, Ձեզ յուրախութիւն»,
«Կտամ բոլորիդ Սահմանադրութիւն
«Քանացէք, գործէք, յառաջ անցէք միշտ»
«Շուտով մոռանաք, ամեն ցաւ ու վիշտ»։

Ա Ռ Թ Ռ Ջ Ն Ա Կ

Երանի՜ քեզ ո՛ թռչուն,
Չի ընութեան Արարիչ՝
Քեզի նախշեց գոյնզգոյն.
Տուաւ աղա՜ թեւ ու թռիչ...։
Օդի ծովուն քաջ լուղորդ,
Դու ընութեան զարդ սիրուն,
Մինչ ցատկրտես ոստէ ոստ
Աշխուժ կորած օրն ի բուն.
Հաւատացէ՛ր, շատ սիրեմ,
Մանրիկ գլուխդ ու աչերդ,
Եթերէն վեր ո՜հ խնդրեմ,
Ինչե՞ր բերիր, լոկ գեղգեղդ։
Արշալոյսին սիրահա՞ր,
Թ՝ վերջալոյսին ոգբերգակ,
Կարգեց Աստուածն արդար.
Աղէ՛, պատմէ, ինձ արագ։
Հէք պանդուխտին իղձերը
Շալկած տանի՞ս քու թեւեր...
Թէ «ախ»երն ժողված
Տանես հիւղակն խարխլած,

Ու երթիքին քովիկը
Թափես թախիծն ու հառաչ...։
Ուր արցունքոտ աչքն երկին
Նայէ պիշ պիշ քարացած,
Այն հէք կինը որ իւր սէր
Տուաւ դժբաղդ զարիպին...։
Թռչո՛ւն, երգդ ցանկալի,
Մարտիրոսուդ այն կնոջ
Որը քամեց դառնաղի,
Կեանքի բաժակն դողդոջ...
Ցաւոտ երգդ խառնուի
Նահատակի արցունքին,
Գթոտ Աստուածն թող կամի
Տալ ուրախ դարձ պանդուխտին...

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ԵՄ ՊԱՐՏԱԿԱՆ

Եթէ մարմնով առողջ կայտառ՝
Թշերս կարմիր աչքս հրավառ
Բազուկներս են ջլապինդ,
Համակ աշխոյժ կորեմ և խինդ,
Հուժկու մարմնով իմ առնական
Հայրենիքիս եմ պարտական։
Թէ վաղանիս քաղցր զեփիւռով
Թոքս ել և էջ առնու փութով,
Եւ անմահ օդն այն կենսունակ
Վառ պահէ միշտ կեանքիս հրագ,
Շնչող կրծքով իմ առնական,
Հայրենիքիս եմ պարտական...։
Թէ երկաթի բազկաց մէջէն,
Արիւնս առնէ կրակոտ շրջան,

Սրտիս բոյնին մէջ հոյաշէն,
Վեհ հոգւոյ գանձ կայ պատուական
Դարձեալ սրտովն իմ առնական,
Հայրենիքիս եմ պարտական...։
Թէ մնտուկս լիք արծաթ ոսկով,
Կապրիմ անհոգ և անխռով,
Մայր բնութեան ծոց երջանիկ
Թէ վայելեմ ամէն բարիք.
Հարստութեամբ իմ բաւական
Հայրենիքիս եմ պարտական...։
Թէ հոգւոյս վեհ զգացումներ,
Թուղթի վրայ, առուն պատկեր,
Թէ գրիչս կոկիկ սահուն
Տողեր շարէ քաղցրահնչիւն,
Մեղմ քնարովն իմ հայկական
Հայրենիքիս եմ պարտական...։
Քաղցրիկ վաթան
Իմ պատուական,
Ծոցէդ ծնայ
Օդովդ սնայ.
Ինչպէ՞ս մոռնամ
Գութն ու խնամ՝
Զոր ջամբեցիր
Ինձ անձանձիր.
Արդ դամ և ես
Նուիրել քեզ
Սիրտս ու արիւնս,
Որ դուն առնուս,
Քեզ հարազատ
Օրեր ազատ...։

ՀԱՅ ՖԷՏԱՅԻՆ

Ամպերուն դրացի լերանց կողքերով՝
Կանցնի հայ ֆէտան վէս խրոխտ դէմքով,
Պատրոնդաշներով կուրծքը զարդարուն,
Կուրծքը վեհ սիրոյ խանդով բաբախուն։
Ձեռքն ունի մօսին գլխին սև փափախ
Սուրն ատրճանակ մէջքէն ընկել կախ,
Կրակոտ աչեր մերթ նետէ յերկին
Փնտռել յար փնտռել, աստղն արշալոյսին։
Կը գնա առաջ, բայց ինքն գիտէ՞ ուր,
Պարտականութիւն կոչէ զինքն անդուլ
Ուր վիշտ տառապանք, հոն է և ֆէտան.
Ուր արիւն արցունք հոն գոռայ իր ձայն։
Սառ, ձիւն, բուք, մրրիկ, համբուրեն ճակատ,
Որպէս մտերմին՝ իրենց խանդակաթ.
Կենդանի վահան ոռմբին գնդակին՝
Վաղուց մոռացել իր կեանքը անգին։
Ճնշուած եղբօր վիճակն խղճալի
Իր սիրտ դարձրել բոյն շանթ կայծակի.
Թէ սուրա գնդակ, թէ ոռնայ ռումբը
Ժպտովմ՝ անյողդողդ դէմ տայ, սիրտն իբր դումբ։
Յար, ձոր կը դողայ ոտքերուն առաջ,
Երբ կը մարտնչի ոգւով դառնացած.
Զրկուած եղբօր իրաւունքները
Զինքն առնեն դիւցազն մտքէ գեր ի վեր։
Մարտին արհաւիրք իրա զրօսանք,
Յաղթութեան դափնին ճակտին անմահ փառք։
Գիտակցութիւնը ցոլքն անմահութեան
Այո, հրաշից է դա նախարան։
Կը դիմէ շտապ դէպի գողգոթան,

Քաղցը ազատութեան սրբազան խորան
Հոն ձեռք բերելու արեամբ կարմրիկ,
Սուրբ ազատութեան օր դերերջանիկ։

ԱՌ ՄԱՆԿԻԿՆ

Ննջիր որդեակ, ննջիր անուշ անխոով
Քեզ կեանք մաղթեմ. երջանկութիւն Աստուծով,
Դու անդրանիկ սիրոյ պտուղ անմեղիկ
Հանգիր, մօրկանդ հարազատիդ սիրոյ գիրկ։
Այն մեղրանոյշ կաթն ստինքին անխարդախ
Թող քեզ ուժ տայ, լինելու մարդ քաջ, անվախ,
Ուսեալ, պարկեշտ, չարքաշ, անկեղծ, միշտ սիրող
Թշուառն, աղքատն, մայրենի ջուրն օդն ու հող։

ՄԱՐՕ

Պարտիզին մէջ անուշաբոյր
Շուշան մ՚ տեսի քնքուշ հեզիկ,
—Զէ՞, ասացի հեզահամբոյր
Մարօիս պէս չես գեղեցիկ։
Հիացեալ այդ դու մայիսի,
Անուշիկ ես և գրաւիչ,
Բայց չես հաւասար դուն մարօի
Պայծառ ժպտին յար կախարդիչ։
Մի՛ փայլփլիր, ժողերդ ժողիր,
Ո՛վ դու ասղիկ բոց պսպղուն,
Զէ՞ մարօիս զոյգ վառ աչեր
Քեզնից աւել են շողշողուն։
Տեսի սոխակն մինչ վարդենոյն
Վրայ թառած կը դայլայլէր

Զէ՞, ասացի դա Մարօի
Թովիչ ձայնին նմանող չէր։
Կանգ, առ լուսին դուն տխրանոյշ
Երազային վարսոքդ քնքոյշ,
Չի գտել եմ մի այլ լուսին
Իմ անմման ջան Մարօին։
Կլկլայ առուակ, դուն սառնորակ
Կը հասկնամ ես քո լեզուն,
Կասես Մարօն միակ հոգեակ
Քեզ պաշտելի, չքնաղ, սիրո՛ւն։
Երբ կը տեսնեմ կամարն երկնի.
Պայծառ մաքուր, անբիծ յստակ,
Հա՛, ասում եմ դա Մարօի
Արտին բերէ իսկ օրինակ։

*

Կապոյտ ովկիանն մինչ կատաղի,
Կոհակներով լեռնանման
Դոչէ ահեղ և փրփրի,
Դա իմ հոգւոյն է կերպարան։

ԻՄ ՆՊԱՏԱԿՆ Է ՈՒՍԱՆԵԼ

Բոլոր մարդիկ ունին փափաք
Թէ չար թէ լաւ մի նպատակ
Բայ ինչ քաղցրիկ և ինչ վայել
«Պատանիիմ՚, միշտ ուսանել»։
Ես չեմ ցանկար գեղ ունենալ,
Զերթ կին արմատ հագուել շքուել
Սիրամարգի մ՚ պէս փքանալ,
«Իմ նպատակն է ուսանել։»

Թէ պարագայք չ՚յարմարին,
Աղնիւ ու սուրբ իմ փափաքին,
Դարձեալ յամառ գիտեմ տքնել,
«Զի նպատակս է ուսանել։»
Թող չ՚լինի մինչ իսկ դպրոց
Փափաքս դարձել կրակ ու բոց.
Գոնէ գիտեմ լափել գրքեր
«Զի նպատակս է ուսանել»։
Թէ կոնակիս վրայ բարդեն
Տունն հոգալու բեռն ահագին
Կամքս արդէն պողպատ դարձել
«Զի նպատակս է ուսանել։»
Թէ դաւշապատ դալարեաց մէջ
Հովանոյն տակ առուակին քով՝
Նստած կարդամ վսեմ մի էջ
Հոգիս լեցուի բիւր հաճոյքով։
Կատարեալ մարդ կուզեմ լինել
Առանց ուսման այդ չի լիներ
Կրօնի ազգի տան հայրենեաց
Զաւակ անկեղծ և անձնուրաց։

ՏԱՃԿԱՀԱՅԻՆ ԶԱՐԴԸ

Զէ՞ չենք ուզեր մենք կերակուր իւղալից
Կրկնակոշիկ ճառճուռաւոր մեր ոտից,
Ո՛չ էլ փողկապ շնչող կրծքի անշունչ զարդ
Ո՛չ ապարանք սենեակներով դաւշապատ։
Գերի ենք մենք, գիրի անտէր ու թշուառ
Փարթամ կեանքը հային ինչով է յարմար
Մեր հայրենիք դարձել է սև աւերակ
Սպանդանոց մը վիթխարի՛, այլանդակ։
Ո՛չ հառաչանք, ո՛չ արտասուք ծովացած՝

Զեն փխրել սիրտ Եւրոպային քարացած,
Ո՛չ էլ դարման անել մեր լեռ դարդերուն
Ո՛չ վերջ դնել քաղցած հայի կոծերուն։
Ինչո՞վ արդեօք, քո դիւշմանը արնխում
Դրախտի աշխարհդ քանդեց, արաց քեզ զուլում,
Ինչո՞վ կապտեց ազատ կեանքդ թագիդ փառք,
Քեզի արաւ խեղճուկ գերի անբարբառ։
—Զէնքով այո՛, բազուկներդ կաշկանդեց
Քաղցը հայրենիքդ դիպ դժոխքի վերածեց։
Արդ պարտ է ձեզ, կտրել հացը մեր բերնին
Ղասի տեղ խամն հագնել, մերժել զարդը սին,
Գնելու սուր ատրճանակ հրացան
Ստրուկներու միակ զարդը անմման։
Ուրեմն հայեր, զէնք պինդ սղմած մեր կրծքին
Կռուինք անվախ բռնութեան դէմ խաւարին,
Պաշտպանելու մեր կեանք պատիւ հայրենիք
Շնչել ազատ, խօսել ազատ, ալ հերիք...։
Ի՞նչ է կեանքը անզէն մարդուն կամ հային
Թէ ոչ ամեն օր ծեծկուած խեղճ հաւին։
Վատահ գիտցիր որ դուն չունիս իրաւունք
Քանի չունիս սուր հրացան քեզ եղունգ։
Թէ միացած թարմ ուժերով՝ կարենանք
Արտայայտել մեր բողոքը սրբազան,
Իրաւունքը մեր կոնակին կունենանք
Ոտներնուս տակն էլ բռնաւորն ժանտ գազան։

Ա Ն Զ Գ Ա Ն Ե Ր Ո Ի Ն

Մինչև ժրուր քամեցինք գերութեան դառն բաժակը
Բայց ափսոս դեռ չգիտցանք զէնք ու սուսերի յարգը։
Մեր եղբարց վիզ կարատեն մենք իրը ապուշ նայենք դեռ

Միշտ միամիտ անտարբեր, որպէս ոչխար խոտակեր։
Բիւր ամօթ մեզ, բիւր ամօթ, որ չենք հաճեր մնոտեաց
Զարդարանքէն, որկորէն, խմիչքներէն կալ ի բաց։
Ինչո՞ւ ինչքին, կապուստին համար առատ դրամ կան
Իսկ երբ խնդիր զէնքին գայ՝ դառնանք մէկ մէկ մուրացկան։
Հայ գլխի վերև շողայ՝ բռնաւորի հատու սուր,
Այս խայտառակ անտարբեր վիճակն տանի մեզ մինչ ՞ուր,
Աստուած ինչո՞վ մեղաւոր, նա մարդուս խելք է տուած
Ցանկաս գլխիդ տէր դառնալ, առ սուր, հրացան վեցհարուած։
Այդ մալ, վարեաթ տունն ու տեղ ՞որի համար կը կանգնես,
Մինչ երեկոյ շնչելու արդեօք ընաւ յոյս ունի՞ս։
Անմիտը չառներ խրատ, թէ վնասէ բիւր անգամ,
Ափսո՞ս խելքիս որ դատարկ գլխին խրատ կը կարդամ։
Թէ վատ ես կամ անճարակ, փոս փորած ես քո ձեռքով
Մէջ պիտ կմբաս այսօր վաղ, ատոր եղիր ապահով։
Զարուեթամբ լի այս աշխարհ, խեղճին չկայ ճանկ մը հող՝
Կեանք վայելէ ու հրճուի, միշտ քաջ կուռողն ու յաղթող։

Գ Ի Շ Ե Ր

Խաղաղ գիշեր մ'էր երազկոտ,
Վեհ լռութիւն մը պերճախօս,
Կը սաւառնէր երկնից ոլորտ
Եւ անեղին կարդար քարոզ...։
Ու աստղերն գոհարաբիր
Մեղմիւ խաղային բաց և խիփ,
Քաղցր գիւթանքով մը իմ հոգին
Վերացած հուպ Մեծ Խորհուրդին՝
Գոգցես կարդար անմահ քերթուած

Զոր Անեղին հրաշակերտ մատ
Գրած ունէր երկնից ճակատ,
Եւ աստղերով էր կէտակիտած...։
Հոն ցոլանայր իմաստութիւն
Անեղ էին սիրով թրթռուն,
Հոն, մեծութիւն անհո՞ւն անծայր,
Հոն կարգ անփոխ. օրէնք արդար։
Այն վեհաշուք կապոյտ կամար
Հրաշէկ գունդերով վառ ի վառ,
Ցնցէր հոգիս վերասլաց
Առ հրաշալին Տէր Զօրութեանց...։
Հոն ամէն ինչ սուրբ էր անբիծ,
Մաքո՞ւր ու կրյա, ջինջ, անապակ՝
Եւ բռնութեան ձեռքն կեղեքիչ,
Չ'զօրէր գործել հոն աւերակ։
Տենդոտ աչօք փնտռէի յար
Կորած աստղն հային թշուառ,
Հեռո՞ւն ընկած անփայլ աւազ,
Հազիւ նշուլէր կիսանբաղ։

ԽՈՒՆ ՊԱՏԱՆԻՈՅ

Վճիտ առուակի սիրուն ափերին,
Դալարեաց վրայ ծառերի հովին,
Տակ ընկողմանած պատանիդ կայտառ,
Արդեօք, ի՞նչ խորհուրդք ման գան ճակտիդ վառ։
Արդեօք զմայլե՞լ է քեզ բնութեան գեղ,
Թէ ո՞չ, թռչնեկաց սիրանուագ գեղգեղ,
Արդեօք, քեզ գրաւե՞ր արծաթշող լուսին
Թէ ո՞չ, սիրտդ վառ է սիրով կուսեկին։

—Հետաքրքիր մարդ, խոկումս հարցունեմ,
Ա՜հ, միայն ուսում, ուսում, խոկամ ես։

*

Առաւօտները արեգ չծագկած,
Քերթող պլպուլի երգ. դեռ չաւարտած,
Կռնակդ դարկած ծառերի կոճղին՝
Ի՞նչ կը մրոտես, յուզուած և լռին։
Արդեօք, բարձրացած հոգւով վեր-երկինք,
Հրեշտակներու հետ զուարթ կը հրճուիք,
Թէ ոչ ականջէդ մուսայդ գեղեցիկ՝
Խօսքեր կը տողէ սահուն և կոկիկ։
Պատանին վերցուց, վեհ ու պարզ ճակատ,
Հայեացք մը նետեց երկինք խանդակաթ
Ապա մրմնջեց—«Ի՞նչ են այդ հարցեր
Ես կը պատրաստեմ աշխուժով դասեր»։

*

Իսկ երեկոյին մինչ վերջալոյսին՝
Արեգ պատրաստուի մտնել յանկողին,
Շքեղ հանդէսին նստած դուն պարտէզ
Արդեօք, ի՞նչ երգեր, երգես հոգեկէզ։
Ի՜նչ, կախարդեց քեզ վհուկն հրաշալի
Դիւթիչ վհուկն որ բնութիւն անուանի,
Եւ կենդանացուց, վառեց խօլ կիրքեր,
Բերնիցդ խլելով անուշիկ երգեր։
Այս անգամ շեշտեց զուարթ պատանին
Հայեացքն անուշակ անոր երեսին,
—«Ես միայն երգեմ ուսման փառքն ու սէր
Նա որ հասկցնէ մարդուս իւր պարտքեր։

ԱՆՄԱՀ ՍԵՊՈՒՀԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Երուանդ Քէօսէեան 908 Յուն։ 25)

Սև գոյժ ցնցեց բոլոր հայերն անխտիր
Սուգը պատեց արիւնաներկ մեր երկիր,
Հերոսական մահով կիսնար անկենդան
Հայ պաշտելի գործիչ Սեպուհն անմոռան։
Հայի ս. հող քանի՞ ծնաւ քեզ նման,
Իսկ արդ ո՞ւր ես, ինչո՞ւ չես տար պատասխան։
Անմահ Սեպուհ, անբիծ հոգւոյդ մենք մատաղ,
Ինչո՞ւ արդեօք, մեզ որը թողիր այնքան վաղ։
Պարկեշտ էիր, պարկեշտ սուրբի մը նման,
Հեզ ու խոնարհ ներողամիտ մեծ հոգի,
Որոց վրայ մինչ իսկ ոսոխդ հիացան
Տիպ ճշմարիտ հայրենասէր պաշտելի։
Ընկերական պարզ վեհ հոգիդ հոյակապ
Որքա՜ն սրտեր քեզի յօդեց սիրակապ,
«Թէ կը ցանկաք ազատ մարդու պէս ապրել,
«Պէտք է գիտնաք, սիրել զոհել, և կռուել։
«Թող մենք կախուենք, բայց թող ապրի ժողովուրդ
Զայնէիր միշտ. դրաւական մեծ սիրոյդ։
Այդ զգացման էլ զոհ գացիր ո՜հ անդարձ,
Նոր վասակի փոթորկին մէջ չարախանձ,
Քո տաճկահայ եղբօր անլուր տառապանք,
Արիւն, արցունք, բանտ կախաղան, հալածանք։
Մատաղ սիրտդ փոթորկեցին, թունդ հանին,
Կեանքդ սիրով նուիրեցիր հայ դատին։
Կուրծքիդ սեղմած Արմենական ս. դրօշակ,
Թիզախ քայլով մարտին դաշտը նետուեցար,
Ուր բռնաւորն վատ հրէշի նմանակ,

Խեղդել ճգնէր հայի բողոքն արդար։
Անշնչացած գիակիդ մօտ ծնրադիր՝
Թաց աչքերով թող համբուրեմք վեհ ճակատդ.
Դուն պարաքերդ ողջ կատարած գնացիր,
Վիշտը թողած մեր բաժինը, մեր սև բաղդ։
Ո՛չ վեհ հոգիդ, ոչ յիշատակդ անգին
Չէ, չի մոռնար, քանի շնչէ հայորդին։
Նա պարծանքով պիտ յիշէ թէ քեզ նման՝
Հերոսներէ տուած գատին սրբազան։
Դէհ, ընկերներ եթէ ս. գործ մենք լքենք
Թէ Սեպուհին ոգին ու վրէժ չլուծենք,
Թէ մոռնանք այն՝ ում համար նա զոհուեցաւ
Մենք անարժան վատեր կըլլանք ազգադաւ։
Դամբանիդ մէջ ցաւոտ ոսկերքդ թող հանգչին,
Զի սաներդ եռանդով լի անյողդողդ,
Շարունակին մղել կռիւ յար ուժգին,
Մինչև բացուի երջանկաբեր առաւօտ։

ԲԱՆԴԱՐԿԵԱԼԻՆ ՅՈՅՍԸ

Բոնաւորի մահաշունչ հրամանով գարշելի՝
Քանի՞ քանի, քաջազունք, մութ ու խոնաւ զնդանի
Մէջ շղթայուած դալկահար, պայծառ լոյսին կարօտով,
Մաշուին հիւծին, անխնայ անվերջ երկար օրերով։
Գաղափարի սրբազան անմեղ զոհեր են դոքա
Զրկանքի դէմ բողոքող, արդարութեան ս. վկայ։
Իրանց վեհ սրտերն անկեղծ. մրկին թշնամին սիրով,
Հոն ել և էջ դիւցազնի, վատ ցասումի հրդեհով։
Խաչի, գանի խարանի դէմը կանգնած անտարբեր
Արհամարհոտ հայեացքով՝ դիտէ ոսոխն մարդակեր։

Ամբոպալից իր աչեր, հեգնոտ ժպտին զառնացած,
Որք ինքնաբեր բարձրանան վեր վեր, դէպ հէքին
Աստուած։
Զուրկ արեգից, լուսնակից, զուրկ ընկերից զաւակից՝
Մենակ լքուած կը մնայ, հևքն շղթայից զառնկակիծ
Հառաչանաց արձագանք, տան տիրագին շեշտերով.
Բայց հէքին յոյս չի մարիր, յուսայ նա միշտ Աստուծով։

ԹԻՒՐՔ ԽՈՒԺԱՆԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Սահմանադրութենէն վերջ (908 սեպտ. 1)

Զեղաւ, այս չ'եղաւ, այն ով է տեսել,
Կեսավուտ ֆէտային ազատ արձակել,
Թող որ քանդուի էդ ազատութիւն,
Գեանի տակ անցնի, Սահմանադրութիւն։
Չկայ «միւսիւլման» կորաւ մեր երկիր,
Ամէնքն էլ դարձան անհոգի, «քեաֆի՞ր».
Էրէկ հրացան, ճէօպխանա ու ռումբ
Նեռոզներն այսօր կազմած են ակումբ...։
Ծօ աս էլ խե՞լք է, ցնդեցան բոլոր,
Մեռնենք միւսիւլմանք հասած է մեր օր,
Քեաֆիր ֆիլային ջարդելու փոխան,
Շէնն տուն և այգին վառելու փոխան,
Ելնեմ իրը եղբայր գրկեմ զայն սրտիս,
Հազար հոգ մոխիր ձեր գլխին, վա՛յ իս։
Տեսար մի հիւրեաթ, տեսար ատալաթ,
Մոռնանք ամէն բան, կարի՞ ասանկ խալֆ։
Ծօ, ուրկէ՞ բուսաւ վաթան կարտաշին,
Հ՞ը... պէտք է քերթել հայերու կաշին։
Քանի հայ շնչէ մեզի չկայ օր,
Աշխարհ քանդողներ իրանք են բոլոր։

Հապա զօրապետք և սա զինուորներ,
Ի՞նչպէս հայերուն եղբայր են դարձեր...

*

Գիտէք թէ ինչու, յուզուած է խուժան,
Զի աւաղ, չարաւ կոտորած Թալան,
Եւ տարիներով երազներ անուշ՝
Ցնդեցան բոլոր... ժամանակն էր ուշ։

ԹՇՈՒԱՌ ՈՐԲՆ

Դուրս կը շաչէ բուքն ու մրրիկ խօլ թափով մը մոլեգին՝
Եւ իւր հեքը սառն-ու կծող թափանցէ ծուծն ոսկորին.
Մարդիկ բոլոր, այսահարուած ապաւէնին շէնից տակ,
Միայն հեքը որբն մերկ ու բոբիկ շրջի մոլար գլխահակ։
Ու սառնաշունչ՝ երգիծարան, խանձող երգը բարկ հովին՝

Սուր գահավէժ, արշաւանքով խուժէր ներսը ականջին։
Հէքն սարսռար դերդ մի տերև խլուած ճիւղէն մայրենի,
Խաղք, դժնդակ, անկարեկիր, անագորոյն սև բաղդի։
Պատառոտուն հագուստների ծակոտիքների տակից՝
Կապտած մարմին այն ոսկրոտ կը գալարուէր տան-ջանքից.

Տակաւ կզգար հեքը մանկիկն իր խեղճ մարմնոյն փայ-տանալ.

Ցօղուն ոտներն ընդարմացած, առաջ նետել չէր կրնար։
Հոգն խեղագար, փոթորկալից, ձեռն քուլաներ շղարէր
Թշուառ որբին այն կիսամեռ, կուրծքն ու ծոծրակն երեսն ի վեր։

Մինչ հառաչէր. բուքն անարեւ խուժէր որկորն ցամաքած.
Ուր որ աւաղ, ամբողջ մի օր չէր մտած իսկ, ցամաք հացք
Նոյն միջոցին հեքին քովէն կանցնէր մարդ մը հարուստ,

Ակնոց աչքին, մուշտակ հագին, մարմնով պարարտ և մուտ։

—«Տէր, կը սառիմ, ո՜հ, օգնութիւն արա թշուառ որբուկիս,
Տաքուկ տեղ մը շնորհելով ինձ... գթովդ ազատէ հոգիս...։
Խէթ, խէթ նայեց մեր հարուստը, հոն ուրկէ ձայնը կուգար,
Եւ նշմարեց ձեռն մէջ կորած մանկիկ մարմնին զոր դողար,
Գութ չբաղխեց ապառաժուտ, անխիղճ որտի մարմար դուռ,
Դէմքը խոժոռ, սիրտը բարկոտ քալեց աչքեր տալով շուռ։
Ապա ձայնով մը հաստ խոպոտ —«կորիր դու գող սրիկայ,
«Տունս պանդոկ դուն կարծեցիր, ձեր արմատը թող չորնայ...»,
Սև մարմինը սեցած հոգւով արագ կորաւ մէջ մութին,
Շուտ հասնելու, տաքուկ թէյին, վառարանին խորտիկին.
Եւ խեղճ որբին աղեկեզիկ, գթութեան կոչը վերջին,
Ա՜հ... մարեցաւ, սուլող հովին մէջ ձեռն, մութի քաոսին.
Խոռոչացեալ աչերուն մէջ արցունքի զոյգ մարգարիտ,
Սառեցաւ... մինչ վեր կը թեւէր տանջող հոգին այն վճիտ...։

Իսկ մրրիկը դժոխային սուլումներով անհալի,
Ողբերգական ահռարանին վախճան դիտէր տխրալի,
Կարծես գթաց հէքին վրայ, և թեւերով իւր ճաղուկ
Ջիւնի ճերմակ պատանքովը ծածկեց սառած հէք որբուկ...

*

Մինչ մեր հարուստ մութ ու լոյսին շտապ շտապ կը գնար,
Ոտքը նիւթի մը կտուչեցաւ և մեր ազն ընկաւ վայր,
Հայհոյանաց տարափով մը ետ նայեցաւ զայրագին
Աչքին առաջ պարզուեցաւ սառած դիակն հէք որբին...։

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կարմրորակ արեան լճակն եղերող՝
Հառաչանաց սև լերանց ետևէն
Սահմանադրութեան արեգն ոսկեշող
Վեր կը բարձրանար թուղթը ճեղքելն։
Մարդակուլ բանտի դռներն երկաթեայ
Խուլ ճռնչիւնով դառնային վրայ,
Սուրբ գաղափարի զոհերն դալկահար
Թիւթիւ դուրս գային դէպի լոյս աշխարհ։
Դերասան լեզուն կեղծիքը թողած՝
Թարգման կը դառնար անկեղծ զգացմանց.
Եւ էլ չէր լսեր բռնաւոր կուռքին
Դարշելի ոտներն այն դժոխային։
Դարաւոր սև դառն ատելութեան տեղ՝
Սուրբ հոգի կը շնչէր եղբայրակցութեան,
Դարշ խաւարամիտ գաղափարից նեղ
Յաջորդէր ոգին հաւասարութեան։
Ժպտելն իսկ մոռցող ժողովուրդն հիւծած՝
Ազատ զգալով, սիրտ, միտքն ու ձեռներ,
Մանկան մը նման՝ կայտռէր զվլխած,
Մոռնալու համար ծովացած դարդեր։
Իսկ ռէակցիօն տարրերն խաւարին՝
Այդ ցնծութեան մէջ չունէին բաժին,
Սև դժոխային կրքերով վառուած՝
Չայրոյթ կուլ տային, լուս բայց կատաղած։
Իսկ լուսոյ որդիք զգացմամբ զոհար,
Ուրախ գոռային անվերջ անդադար,
Կեցցէ՛ ու կեցցէ՛, միշտ Ազատութիւն
Սուրբ արդարութիւն, հաւասարութիւն։

*

Հայեր, շնորհիւ բիւր զոհերու արեան՝
Բացուած է ուղին յառաջդիմութեան.
Ուսմամբ, զարգացմամբ պնդեմք մեր ջիղեր
Շէնցընենք երկիրն մեր երջանկաբեր։
Միշտ տէր կանգնելով մեր իրաւունքին
Ապրենք ու շնչենք իբր մարդ կատարեալ,
Սրբելու արցունք, հէքին, թշուառին
Քայլեցնելով միշտ, մեր սէրն ու հանճար։

ԿՈՒՍԻՆ ԱՂՕԹՔ

Կէս գիշեր էր ջինջ կապուտակ,
Երկինք բացած էր իր կամար.
Գոհար աստղերն յակինթ սուտակ
Փայլփլէին հոն վառ ի վառ։
Լիալուսին արծաթաշող
Խորհրդաւոր սրտիկն իր դող,
Մեղմիւ լողայր կապոյտ ծովուն
Ալեաց մէջը անծայր անհուն։
Լուռ էր ընութիւն, միայն վտակ
Սև գարդերուն իր ողբերդու՝
Հառաչելով փախչէր հեռու
Երթալ մեռնել նոճերու տակ։
Լերանց կատարք խորհրդաւոր՝
Լուռ վկաներն այն դարաւոր,
Ընութեան փառքը դիտէին յար
Թռչնոց երգեր զեփիւռին պար։
Պէս պէս ծաղկունք կանաչ ծառեր
Մայիսի փառքով պճնազարդ,
Ամբրոսական անմահ բոյրեր
Կարտաշնչեն դիմաք զուարդ։

Լուռ կը խոկար, խաղաղ լճակ
Իր ջինջ յատակն խորհրդաւոր՝
Ոչնչ աստղերն այն բիւրաւոր,
Լոդ կտային։ մինչ լուսնիակ
Ոսկեղէն սիւնն վրան պարզած
Դիտէր դէմքն իր մելանոյշ,
Եւ շողերովն իր զովացած
Մանր ալեաց հետ խաղար քնքուշ։

*

Այդ միջոցին մի կոյս ոգի
Յաւէրժահաճոյ արդեօք, երկնի,
Սև սաթ վարսերով ցիրուցան
Պարտիզին մէջ լուռ կուգար ման։
Շնորհալի ոտներուն տակ
Զմրուխտ խոտերն գլխահակ,
Ուրախութեամբ տեղի տային
Կաքաւակերպ իր գնացքին։
Կոյսն բաղուկներն խաչաձեւած
Հոն կանգ առաւ լուսնի դիմաց։
Դէմքը վերցուց դէպի լուսին
Ո՜հ, ինչ պատկեր, ով Աստուած իմ,
Ա՜հ, տիրանուշ այն նայուածքը
Ի՜նչ հուր ունէր և ի՜նչ կրակ...։
Դրախտէն փախած հրեշտակ արդեօք,
Մտած կուսի մը կերպարանք.
Շրջել եկած էր վաղորդ,
Ադամորդու տալու պատրանք։
Սև, կեռ յօնքերով եղերուած
Խոշոր աչերն կուսին թովիչ,
Սիրոյ ովկիանն կայր հոն յուզուած,
Կոհակներովն իր կախարդիչ։

Ամբողջ մի ժամ, նա այդ դիրքով
Անշարժ կը նայէր լուսնեակին,
Սրտին յուզմունք, բոցն ու խռով
Յոլայր տխուր յիւր նայուածքին։
Ճերմակ շուշանն ու վարդ քեաֆուր
Փթթել էին այսից վրայ,
Զունին աստղերն իր աչաց հուր
Ուրկէ կայծակ սիրոյ ցոլայ։
Երկար հասակն իր չինարի
Քողտրիկ իրանն իւր դիւրաթեք,
Ա՜հ քանիսն շնորհալի
Առնէին կոյսն այն լուսարեկ։

*

Զոքեց կուսիկն կանաչ խոտին
Վրայ՝ փափկիկ երկնից գորգին,
Խոնարհեցուց իր լոյս ճակատ
Համբուրեց գետինն ցօղազարդ։
Ապա երեսն խաչակնքեց
Մարմար վզիկն մէկ կողմ թեքեց,
Եւ հոլանի թևերն բաժրիշ
Վեր բարձրացուց, և ակնապիշ՝
Նետեց հայեացքն իր ազաչող,
Առ զօրութեանց տէրն ու ստեղծող։
Լուռ փափուք նուռ շրթներուն,
Մրմունջքն էին մրկող հոգւոյն։
Կաղօթէր կուսիկն վերասլաց,
Եւ մարգարիտք զառն արտասուաց
Դեղ աչերուն յորդած ակէն
Վայր գլոորուէր վարդ թշերէն...։
Ո՜հ, ինչ շնորհք, որպիսի՞ գեղ
Ունէր կուսիկն այդ վայրկենին.

Տխուր դէմքըն իր շնորհաղեղ
Ցնցէր, մրկէր, մահկանացուին։
Լուսինն ոսկի իր վարսերը
Սև խոպոպիքներուն խառնուած՝
Ցանկար ամոքել դարդերը
Զքնաղ կուսին, ցաւոտ, յուզուած։
Մինչ զեփիւռի հեւքն խելայեղ
Վարսերուն հետ մեղմիւ խաղար,
Համբուրելով պայծառ անմեղ
Կուսին ճակատն անյագաբար։
Մինչ իսկ դրախտն ահ, չկարէ
Պարզել այնպէս վեհ տեսարան,
Երբ կոյս հոգին լուռ կաղօթէ
Հրեշտակներն իսկ կը սարսռան։
Այն հրավառ հեզիկ նայուածք
Մոգիչ բոցերով շողազարդ
Մինչ վեր առնէր դէպի Աստուած,
Հոն կը բացուէր, երկնից դրախտ։

*

—Ի՞նչ արդեօք, ցաւն այդ կուսեկին,
Ի՞նչ կը խնդրէր անբիծ հոգին...։
—Ա՜հ, նշանածն իւր պաշտելի
Զինուոր ընկել... և խիստ հեռի,
Պատերազմի դաշտին վրայ
Կռիւ մղէր արիւնլուայ...։
Նաղելի կոյսն վառ կարօտով
Կաղերսէր միշտ դառն արցունքով.
Տեսնել առողջ դարձ յաղթական
Պաշտելիին իր աննման...։

ՈՒՍԱՆՈՂ ՄԱՆԿԻԿՆ

Վեր է ցատկում զուարթ մանկիկն անկողնէն
Արագ արագ երեսները լուանում,
Առոյգ կայտառ, լուսաժմիտ երեսէն՝
Կարմիր արեան, կարծես շիթեր կաթկաթում։
Զոքում գետին, կարճ աղօթքով մը լոիկ,
Խնդրում է իր տէր արարչէն առողջ միտք.
Ապա կողքից պայուսակը քարշ տուած,
Դիմում դպրոց, ցատկրտելով ձախ և աջ։
Այն հասակը ոսկեղինիկ մանկական
Քանի՞ հմայք, և հուր ունի մոգական.
Աւրիծ ճակատն, յոտակ նայուածքն իր անմեղ,
Կատն նրան հրեշտակի տիպ լուսագեղ։
Նա դիմում է դէպ այն խորան սրբազան,
Ուր կերտբուում է ազգերի ապագան.
Ապագայի յոյսը դիմում է դպրոց
Ստանալու գիտակցութիւն երկնի բոց։
Սուրբ պարտիզում մանկիկն թիթեռ հոլաթև,
Ծաղկէ ծաղիկ թռչկոտում է թեթև.
Իրբ ժիր մեղու հաւաքում հիւթ անթառամ,
Պատրաստելու գիտութեան մեղր քաղցրահամ։
Նրան աշխարհ միայն ունի, գեղ, ժպիտ,
Զունի կնճիռ իր պարզ ճակատն լուսափթիթ.
Նրա վիշտ, ցաւ, միա՜կ միա՜կ իր դասեր,
Եւ նրա փառք գլել, առաջ անցնել։
Քանի՞ իրան նա երջանիկ է զգում,
Երբ բոլորից յառաջադէմ դասերում,
Վայելում է իր ուսուցչին՝ սէրն գորով,
Փոքրիկ հոգին հրճւում անխառն հաճոյքով։

Բարի մանկիկ գնա ուսնել դպրոցում.
Թէ սև խաւարն ի՞նչ աւերներ է գործում,
Ում երեսէն մենք ի՞նչեր ենք կորցրել,
Քանի արիւն և տառապանք կուլ տուել...:
Ի՞նչ է դառնում էս հոզագունդ երբ արև
Զգայ տալու լոյսն կենսունակ բոցաթև,
Կեանք մեռնում է... այսպէս ուրեմն գիտութիւն
Կեանք կտայ մեզ, և կեանք, և փառք, զօրութիւն:
Գիտութիւնը իրա լեզուով ճարտասան
Բացատրում է այն պարտքերը սրբազան.
Որք ծանրանում են բոլոր վեհ սրտերուն
Որոնց խորքում մնալու արիւն է շրջում:
Հոն ուսանում, սիրել որբին թշուառին
Եւ քաջի պէս կուրծք տալ խութին խարակին,
Որք գան անգուլ էս անիրաւ աշխարհում,
Փշրել ազնիւ գաղափարներ և ձգտում:
Մատաղ սիրտդ առած ճաշակ բարիին
Փոթորկում է տենչով վառուած գեղեցկին.
Երգում ես դու այդ հատակէդ երջանիկ
Պաշտել Աստուած, ծնողք, ընկեր, հայրենիք:
Թոռիր մանկիկ, թոռիր, դէպի այն դրախտ,
Ուր սաւառնում է ազգերու, փառքն ու բաղդ.
Ջանա, ճգնիր յղկել մտքիդ գոհարը,
Որ փայլ շող տաս էս աշխարհում դեռ խաւար...:

ԵՂԲԱՅՐ ԵՆՔ ՄԵՆՔ

Ալ բաւ որքան տգիտութիւն կարդաց իր սև օրերը,
Թիւնաւոր ժանգ աստեղութիւն կրծեց մեր սիրան ու օրք.
Ալ բաւ որքան խաւարակուռ սև մահաշունչ բոնութիւն
Մաբեց, լափեց, ժողովրդի կեանքի արևն և արիւն...:

Մայր հայրենեաց հողի եղբայր ենք մենք այսօր յաւիտեան,
Շահ ՀԷաստով իրար յօդուած, չկայ խիր ազգութեան,
Օսմանեան մեծ հայրենիքին քաղաքացիք ենք այժմիկ,
Եւ թիւրք, և հայ, և քիւրդ, արաբ և հրէա և պարսիկ:
Տեսէք, ի՞նչպէս կը ծածանի, ազատութեան ս. դրօշակ,
Վառ շողերով ծիածանի քաղցր հաշտութեան նշանակ:
Վէտ վիտումէն իր դիւթական վար կաթկաթին նկարէն՝
Եղբայրութեան, հաւասարութեան, անմահ թերթերն վարդաշէն,
Հիւսելով փառք, պսակ դափնի ճակատներուն այն անմոռ՝
Որոնք իրենց կեանքի գինով փարատեցին մութ ամպեր,
Եղբայր ենք մենք, հեռու մենէ ատելութիւն չարախանձ,
Մոլեկրօնի գազանային խաւար կրքեր, քէն, նախանձ:
Եղբայր ենք մենք, նահատակաց ս. արիւնով վկայուած,
Պարտինք սիրել յարգել, զիրար, աննենգ սիրով անկասկած,
Մենք կեանք տուինք ձեռք էլ կտանք շէնցնելու մեր վաթան,
Զուլումներից քար քանդ եղած, մեր քաղցր վաթանն աննման,
Գիտակցութեան անկեղծ սիրով իրար փարածամրապինդ,
Ճիգ պիտ թափենք, տարածելու ուսում, արուեստ, սէր և խինդ:
Այն որ ազգին էն պարգևեց վաթան չքնաղ մերին պէս,
Օժտած դրախտի պերճ փառայեղ, տեսարանով բիւր պէս պէս,
Գայծառ արև, կապոյտ կամար, անմահ օդով լուսնակով,
Թաւուտ լեռներ, նեկտար ջրեր, ձոր, դաշտ, ծաղկունք, թոչնակ ծով:

Որոց թովիչ տեսքին առաջ, յափշտակուած մեր հոգին,
Վեր սաւառնի գոհ մրմունջով, փառք տայ իր տէր
Արարչին։
Ինչո՞ւ ուրեմն առելութեան սև թոյն խառնենք մեզը
կաթին՝
Որ պաշտելի վաթանի ս. ստինքէն վար կաթկթին...։
Ի՞նչ կը պակսի մեզ, հոգ արդեօք՝ հանճար թէ գանձ
պատուական,
Հարուստ հանքեր, արծաթ ոսկի, գերդ կոյս, հողի տակ
ծնան,
Արթնցնենք, զանոնք իրենց երկար նինջէն դարաւոր,
Հիւսել ցանցերն երկաթուղւոյն, շինել շէնքեր փառաւոր։
Տանք գիւղացումիշտ ջանասէր, եզներ ցորեն ու գութան,
Վարել դաշտերն այն ամայի, անհունս բերրի՞ պատուական։
Թող որ կայտառն ուշն ու մաքին ազատ օդին մէջ արձակ,
Արածելով զմրուխտ խոտեր, տալ մեզ իւղ կաթ անապակ,
Արդարութեան աւին տակ ժողովուրդ գոհ ապահով
Շուտով փութով հարստանայ, կապրի ուրախ անխռով։
Մենք գիտենք արհեստաւորի ուշիմութեամբ բնածին՝
Նոր գիւտերով, քրտինք ճակտով խլել դափնի մեր
գլխին։
Եւ ուսումը անմահարար, իր մատներով ոսկետառ
Երջանկութիւն պիտի դրոշմէ մեր սրտերուն սիրավառ,
Հոն պիտ շնչէ միայն ս. սէր եղբայրական ցանկալի
Միահաւուռ օգնել իրար, հոն ուր մեր ուժ պակասի։
Եւ մենք անկման անդունդներէն, վեր բարձրացած
թարմ ուժեղ
Քաղաքակիրթ ազգերու մէջ, պիտ գրաւենք պատուոյ տեղ։
Այսպէս ուրեմն մենք Օսմանեան քաղաքացիք յար ազատ՝
Մայր հայրենեաց ծոցէն ծնած, եղբայրեր ենք բաղդակից՝

Եւ հոն ուր որ մեր կրծքերը իրար փարին հարազատ
Ո՞ւրն է արդեօք՝ այն հպարտ ձեռք, որ խլէ բաղդ մեր
ձեռքից,
Որ կապտէ փառք մեր ճակտից...։

ԱՇՆԱՆ ՀՈՎԻԿ

Ինչո՞ւ տրտում փչես հովիկ,
Փնտռես արդեօք, դուն գեղեցիկ
Գարնան ծաղկունք թէ սոխակներ
Կանաչ դաշտեր, ազատ լեռներ։
Աւաղ նոքա անցան գացին,
Դեղնած տերևք միայն թողին
Բնութիւնը աղքատացած
Պչրանքներէն իսպառ զրկուած։
Չկան ծաղկունք անուշահոտ
Որովք պճնին այգին արօտ,
Որոնց բոյրովն ամբրոսական
Լեռներ դաշտեր տաճար դառնան։
Սոխակի ձայն վաղուց կտրել
Իր վարդենին ալ չորացել.
Փոխան թռչնոց դայլայլիկին
Ագռաւներու ձայնք կը լսուին։
Չկան թիթռանց վաշտք գոյնզգոյն
Ալ չերևիր փութկոտ մեղուն.
Եւ գարնային զով զեփիւռին
Փոխան շնչէ սառն հիւսիսին...։
Ո՜հ, ուր դաշտերն կանաչազարդ
Ո՞ւր ջինջ երկինք կապուտագեղ
Ո՞ւր մեր սոխակն և սիրուն վարդ.
Դայլայլիկներ սիրագեղգեղ...։

ՎԱՌԵԱԿՆԵՐՈՒ ԿՌԻՒ

Աղջիկ, տիւ[1] ես ձիկ[2] պան[3] ասող,
Պաժդ ու պուսուլդ[4] ես անեմ խող.
Ասա տեսնամ տիւ վիր[5] շունն ես,
Կայներ վերէս կը խաճմճես[6] ...:
—Տէրամեռիկս[7], ձիկ չխաւնաբ[8],
Տես, Աղամայ[9] տարուան քաֆթառ...
Ո՞ր տեղս քէթը[10] ի քի՞թս թէ բերանս,
Սոխ չկէրած կը կծուրծամ...:
Թէ որ կեսխին[11] տանին իրկան՝
Եօթ խատ[12] տղայ կէր[13] քե մկայ[14],
Տեսէք, թէ ինչխ[15] պեղեր մրան,
Սուտ թէ կասեմ աչքս թող քօռնայ:
—Տէ խող, տէ խող, լաքաթայ[16] շուն,
Ինչխ[17] դիւս խանեց[18] օձու լեզուն,
Էլ պան չկէր կպար իրկան,
Ումուտամեռ[19], լաքէօշ պէրան[20]:
Էն շէնրմէն շալիանէն[21]
Խաւերու պոն[22] տանդ վերէ՞ն
Պապրլամիշ[23] կէլնես մկայ,
Թէ պաժ պօյիդ[24] վերէն սանա[25]...
Կէօ[26] կիտես թէ խուրնի խրեղէն[27]
Աշխար հէյրան[28] կարե վերէն...
Էլ չկէ՞ր կուզ[29] կօլօտ[30] աղուէս

1) Դու. 2 ինձի. 3 խօսք 4 հասակդ և ձեւդ. 5 որու. 6 հաչել. 7 տիրոջ մեռնող. 8 հաւնեցար. 9 Աղամի. 10 ծուռ. 11 ժամանակին. 12 հատ. 13 կար. 14 հիմա. 15 ինչպէս. 16 անամօթ. 17 ինչպէս. 18 հանեց. 19 յուսամեռ. 20 մեծ և ծուռ բերան. 21 շէն տան հեգնական բացատրութիւն. 22 բոյն հաւերու. 23 պաթենալ. 24 հասակ. 25 բարձր. 26 կարծես թէ. 27 հուրնի հրեղէն. 28 հիյացած 29 սապատուոր. 30 քաճաճ:

Ապուռ պատռուկ[1], քէօնթիկ[2] խլէզ:
Զում[3] իրիկուն կայնի փօնտուռ[4]
Տուն թող վէրան[5] ապուռ ջպուռ[6]՝
Ինք[7] փեսացուն էն որ տեխէն[8]
Տիւս պիտի կեայ կախուես պեղէն...:
—Վա՜յ, ձեռս պագես[9], ծօ տիւ էն չի՞ր[10],
Որ Մնօին աչքով արիր...
Թէ որ հաղվդ[11] չ'զրուցես
Էյ այիպներդ[12] տիւս խանեմ[13] ես...:
Տօ, կը տիանաս տափիկ աղուէս...
Իզար[14] ճուռ մ'էլ տարաւ կողէս.
Էլ չկէր պաց պէրան[15] կոիկ
Զում[16] իրիկուն կոտծող շոռտիկ[17]:
Զէնի՞ որ տիւ «այրը կասես՝
Բէնն էլ մարքամէն կը քաշես[18]»,
Կազէթ կարտաս, առակ չառակ,
Կը կոտռատես լեզու ռանկ ռանկ[19],
Կիտես թէ մարդ տառցար մկայ[20]
Աչքերով շիլ՝ քթով զուռնայ[21]...:
Ծօ, տրմի տրբրմի[22] սև պապակէլ[23]
Ձիկ չես խաւնե, նամուսուզ[24] տէլ[25]...:
—Ես քե նշանց[26] կուտամ մկայ,

1) Ամօթի քող պատռած. 2 աղտոտ և երեսէ ինկած. 3 մինչև. 4 փողոցի դուռ. 5 աւերակ. 6 խառն ի խուռն. 7 նայենք: 8 կողմէն. 9 համբուրես. 10 չէ՞իր. 11 արժէքովդ. 12 պակասութիւններդ. 13 հանեմ. 14 զարկաւ. 15 բաց բերան. 16 մինչև. 17 ամենատարբերական ձեռագործ. 18 հաղիւ կարդալ գիտցողներուն ժողովրդական ասութիւն. 19 գոնդզդոյն. 20 հիմա. 21 փչելով նուագարան. 22 ծանրաշարժ. 23 ագեղ, պարարտ և անշարժ հատ վիզ ունեցողներուն յատուկ ժողովրդական բացատրութիւն. 24 անպատիւ. 25 աղջիկ. 26 ցոյց.

Թէ ես վո՞վ[1] եմ, վազեց վրայ
Պռնեց պոչիկն[2] ու չխչփեց[3],
Ճոչ[4] աղջկան մազեր ճռրկեց...:
Աման ի՞նչ լաւ թամաշայ էր[5],
Աշխարհ թափաւ կէր[6] ինոնց սէյր[7]
Մէկն կը թքէր, մէկն կը ճանկէր...
Մէկն կը լանկէր[8]... մէկն կը ճվէր...:
Ափալ թափալ վրայ հասաւ
Փոքր աղջկան մեծ մայր պառաւ.
—Թիւ, ձեր իրես, անամօթնե՞ր,
Ձեր իրիսի ապուռ պատռե՞ր...:
Ա՞ռատ կը պաժնէք, տէկէրկի՞ն էք...
Չէ՞ք ամչնա՝, ի՞նչ խալթ կ'անէք...
Պան չեմ ասե, գետի՞ն, մանէք,
Որ մեր նամուս խոզ չ'դնէք...:
Էս ազիզ[9] կեախ[10] Աստծուց ես
Տիլաք կանեմ[11] որ ձեր իրես
Մարդու պուուկ[12] չ'առնի խակի[13]...
Սև սև խոզեր ձեզի սթրի[14]...:

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Б
7 (1) 29
ԵՐԵՎԱՆ, Мясн
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1) Ով. 2 Եաեի ծամ. 3 ուժգին շարժել. 4 մեծ. 5 դիտելու տեսարան: 6 անաւասիկ. 7 դիտելու տեսարան: 8 քացի տալ: 9 անգին: 10 ժամանակ: 11 խնդրուածք անել: 12 շրթունք: 13 բնաւ: 14 ծածկելով անյայտացնել:

«Ազգային գրադարան»
NL0367044

58156